նաց 'ի թուին ١٢٢٨, յորս գրեալ էին Ս. Յովհաննէս եկեղեցին. իսկ 'ի հրովարտակին տուեալ Յունաց 'ի թուին ١٢٥٧ սակս նորոգութեան Ս. Յարութեան և Բեթղեհէմի, ոչ գտին բառ ինչ վասն եկեղեցւոյն Ս. Յովհաննու, և Յոյնք անդադար յուզէին զայս խնդիր 'ի Թագաւորեալ քաղաքի անդ. ուստի հարկ եղեւ վերստին հարցումն ուղղել առ Բդեշխն Երուսաղէմի Ալի Փաշա, զի բարւոք քըննեսցեն զեկեղեցին զայն առաջի այլազգեաց և միաբանաց Հայոց և Յունաց, և ստուգեալ ծանիցեն թէ՝ արդարեւ Հայք ինքեա՞նք նորոգեն զսեփհական տեղիս և զվանօրայս իւրեանց, եւ թէ Յոյնք՝ ընդէ՞ր ձեռնամուխ եղեն 'ի շինութիւնս եւ 'ի նորոգութիւնս վանօրէից՝ առանց Բարձրագոյն հրամանի, վասն որոյ երկարեցաւ վէճն եւ խնդիրն մնաց անկախ. և վերջապէս Յոյնք ոչ ետուն թոյլ շինել Հայոց զտանիս եկեղեցւոյն, և մնաց այնպէս որպէս եւ էին։

Կայսրն ամենայն Ռուսաց Նիկողայոս առաքեաց նշան պատուոյ առ Զաքարիա Պատրիարքն Հայոց Երուսաղէմի, եւ զի չէր նամակ կամ վկայական վասն այնր, ուստի ոչ կամեցաւ ընդունել զայն առանց գրի. և մնաց նշանն ամիսս երիս 'ի Պէրութ՝ մինչեւ եկն գիր, և ապա ընկալաւ զայն. և ապա գրեաց 'ի Կոստանդինուպօլիս առ Պատրիարքն և առ Գլխաւոր Ամիրայս զորպիսութենէ նշանին. սակայն նոքա դժգոհ իմն էին զայնմանէ, թէ ընդէ՞ր առանց հարցանելոյ մեզ ընկալաւ զայն, որոյ վասն գրէ Զաքարիա՝ առ Փոխանորդն և ասէ՝ « Կայսերական նշանին ես ոչ երբէք հետեւեցայ. միթէ փառք չէ՞ ազգին եւ Աթոռոյն. յե՞րբ Ֆրանսայու Կայսրն հաւատս ընծայեաց Հայոց պատարագին, յինէն աղերսանօք խնդրեցին. և յապուշ կըրթեցան կրօնաւորք Ֆրանկաց և պապադաւանք. այս տընօրէնութիւն յԱստուածուստ է և ոչ 'ի մարդկանէ, էջմիածինցիք յե՞րբ Աթոռ համարէին զԵրուսաղէմ. այժմ Ներսէս Սրբազանն և Սինոդականք՝ պանծանօք Առաքելական Աթոռ գրեն յամենայն գիրս իւրեանց։ Արդ՝ եթէ յարգելիք ոչ կամէին ընդունիլ մեր զԿայսերական պարգեւն, ընդէ՞ր ոչ ծանուցին մեզ՝ յորժամ զհրաժարական գիր մեր թարգմանեալ ետուն 'ի Դուռն Արքունի ըստ քոյդ գրու-